ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,6-80-10.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 02 » մարտի 2020 թվականի N 7

ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՄՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Հիմք ընդունելով « Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 21.07.2005թ. թիվ 1283-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաբերդ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող Հայաստանի Հանրապետության կառավարության 21.07.2005թ. թիվ 1283-Ն որոշմամբ համայնքային սեփականության իրավունքով փոխանցված 06-108-0105-0001ծածկագրով, « Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծով 2.8277 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի նպատակային նշանակության ընդերքօգտագործման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ համայնքի անվամբ կատարել պետական գրանցում:
2. Հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ Քարաբերդ համայնք Հանքագործների փողոց թիվ 3 փոստային հասցեն:

Համայնքի ղեկավար Յուրիկ. Շավելյան

02 մարտի 2020թ.
Գ. Քարաբերդ